ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԱՊՁԲ-7/16-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30 -ը հունվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Խաք" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/16-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը, և այն փաստը, որ "Խաք" ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված թթվասերի առաջարկված միավորի գինը նվազեցնել 846 ՀՀ դրամի, իսկ կաթնաշոռի առաջարկված միավորի գինը նվազեցնել 1 431 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում 60 825 105 (վաթսուն միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար մեկ հարյուր հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 90001114[illegible] ՀՎՀՀ 00867[illegible] ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն	"Խաք" ՍՊԸ ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 22011338303230[illegible] ՀՎՀՀ 04203287 տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/16-9 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2017թ.			
						1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 զորամաս	կգ	4 000	846	3 384 000	1 100	1 100	700	1 100
2	Թթվասեր տեղական Երևան -88865 զորամաս	կգ	4 500	846	3 807 000	1 125	1 125	1 125	1 125
3	Թթվասեր տեղական Երևան-32822 զորամաս	կգ	3 000	846	2 538 000	750	750	750	750
4	Թթվասեր տեղական Երևան-14203 զորամաս	կգ	17 902	846	15 145 092	4 475	4 475	4 475	4 477
5	Կաթնաշոր դասական Երևան - 14172 զորամաս	կգ	4 500	1 431	6 439 500	1 200	1 200	900	1 200
6	Կաթնաշոր դասական Երևան-88865 զորամաս	կգ	4 500	1 431	6 439 500	1 125	1 125	1 125	1 125
7	Կաթնաշոր դասական Երևան -32822 զորամաս	կգ	3 000	1 431	4 293 000	750	750	750	750
8	Կաթնաշոր դասական Երևան-14203 զորամաս	կգ	13 123	1 431	18 779 013	3 280	3 280	3 280	3 283
Ընդամենը		60 825 105 (վաթսուն միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար մեկ հարյուր հինգ) ՀՀ դրամ							

Ծանոթություն՝

թթվասերի և կաթնաշոռի պահանջարկի մատակարարումը 3 օրը մեկ անգամ՝ ըստ զորամասերի հայտի,մատակարարի միջոցներով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

/Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22001333032300
ՀՎՀՀ 04203287

տնօրեն

/Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 2
№ ՇՀԾՁԲ-7/16-9 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 գորամաս	307100	614200	930600	1237700	1547900	1861200	2058600	2256000	2453400	2763600	3073800	3384000
2	Թթվասեր տեղական Երևան -88865 գորամաս	314080	628155	951750	1269000	1586250	1903500	2220750	2538000	2855250	3172500	3489750	3807000
3	Թթվասեր տեղական Երևան-32822 գորամաս	209400	418800	634500	846000	1057500	1269000	1480500	1692000	1903500	2115000	2326500	2538000
4	Թթվասեր տեղական Երևան-14203 գորամաս	1249330	2498665	3785850	5047800	6309745	7571695	8833645	10095600	11357550	12620064	13882580	15145092
5	Կաթնաշոր դասական Երևան - 14172 գորամաս	572400	1144800	1717200	2289600	2862000	3434400	3863700	4293000	4722300	5294700	5867100	6439500
6	Կաթնաշոր դասական Երևան-88865 գորամաս	536625	1073250	1609875	2146500	2683125	3219750	3756375	4293000	4829625	5366250	5902875	6439500
7	Կաթնաշոր դասական Երևան -32822 գորամաս	357750	715500	1073250	1431000	1788750	2146500	2504250	2862000	3219750	3577500	3935250	4293000
8	Կաթնաշոր դասական Երևան-14203 գորամաս	1564560	3129120	4693680	6258240	7822800	9387360	10951920	12516480	14081040	15647030	17213020	18779013

Թթվասերի CPV-ի կոդը՝ 15512000/1/4/3, կաթնաշոռի CPV-ի կոդը՝ 15542100/1/4/3

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գնումների գործակալություն
Հ/Հ 900011[illegible]079
ՀՎՀՀ 00867455
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաչ" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22001333032800[illegible]
ՀՎՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-7/16-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ք. Երևան **26 -ը հուլիսի 2016թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Խաք" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 26.02.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/16-9 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետը և N 1 համաձայնագիրը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի N 1 համաձայնագրի գնման ժամանակացույցում ներառված 2016թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ամբողջ խմբաքանակի համար թթվասերի միավորի գինը նվազեցնել և սահմանել 846 ՀՀ դրամ, իսկ կաթնաշոռի միավորի գինը նվազեցնել և սահմանել 1 431 ՀՀ դրամ, համամասնորեն նվազեցնելով գնման և վճարման ժամանակացույցերով նախատեսված գումարները /Հավելված N 1,2/: Արդյունքում Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է 72 564 170 (յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

1.2 Սույն փոփոխության դրույթները տարածվում են 2016թ. հուլիսի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելվածներ N 1,2-ը հանդիսանում են փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	"Խաք" ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220013330323000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 04203287
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ	Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2016թ.			
						1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 գորամաս	կգ	2 063	940	1 939 220	1125	938		
2	Թթվասեր տեղական Երևան - 14172 գորամաս	կգ	1 687	846	1 427 202			938	749
3	Թթվասեր տեղական Երևան -88865 գորամաս	կգ	2 475	940	2 326 500	1350	1125		
4	Թթվասեր տեղական Երևան -88865 գորամաս	կգ	2 025	846	1 713 150			1125	900
5	Թթվասեր տեղական Երևան-32822 գորամաս	կգ	1 650	940	1 551 000	900	750		
6	Թթվասեր տեղական Երևան-32822 գորամաս	կգ	1 350	846	1 142 100			750	600
7	Թթվասեր տեղական Երևան-14203 գորամաս	կգ	14 850	940	13 959 000	8100	6750		
8	Թթվասեր տեղական Երևան-14203 գորամաս	կգ	12 150	846	10 278 900			6750	5400
9	Կաթնաշոռ դասական Երևան - 14172 գորամաս	կգ	1 650	1590	2 623 500	900	750		
10	Կաթնաշոռ դասական Երևան - 14172 գորամաս	կգ	1 350	1 431	1 931 850			750	600
11	Կաթնաշոռ դասական Երևան-88865 գորամաս	կգ	1 925	1590	3 060 750	1050	875		
12	Կաթնաշոռ դասական Երևան-88865 գորամաս	կգ	1 575	1 431	2 253 825			875	700
13	Կաթնաշոռ դասական Երևան -32822 գորամաս	կգ	1 375	1590	2 186 250	750	625		

14	Կաթնաշոռ դասական Երևան -32822 գորամաս	կգ	1 125	1 431	1 609 875			625	500
15	Կաթնաշոռ դասական Երևան-14203 գորամաս	կգ	8 897	1590	14 146 230	4853	4044		
16	Կաթնաշոռ դասական Երևան-14203 գորամաս	կգ	7 278	1 431	10 414 818			4044	3234
Ընդամենը		72 564 170 (յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ							

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011144079
ՀԿՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ԵՏԱ ղեկավարման գծով պետ

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 220013330323000
ՀԿՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 2

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 զորամաս	1057500	1057500	1057500	1939220	1939220	1939220	2732768	2732768	2732768	3366422	3366422	3366422
2	Թթվասեր տեղական Երևան - 88865 զորամաս	1269000	1269000	1269000	2326500	2326500	2326500	3278250	3278250	3278250	4039650	4039650	4039650
3	Թթվասեր տեղական Երևան- 32822 զորամաս	846000	846000	846000	1551000	1551000	1551000	2185500	2185500	2185500	2693100	2693100	2693100
4	Թթվասեր տեղական Երևան- 14203 զորամաս	7614000	7614000	7614000	13959000	13959000	13959000	19669500	19669500	19669500	24237900	24237900	24237900
5	Կաթնաշոր դասական Երևան - 14172 զորամաս	1431000	1431000	1431000	2623500	2623500	2623500	3696750	3696750	3696750	4555350	4555350	4555350
6	Կաթնաշոր դասական Երևան-88865 զորամաս	1669500	1669500	1669500	3060750	3060750	3060750	4312875	4312875	4312875	5314575	5314575	5314575
7	Կաթնաշոր դասական Երևան -32822 զորամաս	1192500	1192500	1192500	2186250	2186250	2186250	3080625	3080625	3080625	3796125	3796125	3796125
8	Կաթնաշոր դասական Երևան-14203 զորամաս	7716270	7716270	7716270	14146230	14146230	14146230	19933194	19933194	19933194	24561048	24561048	24561048

Թթվասերի CPV-ի կոդը՝ 15512000/1/4/3, կաթնաշոռի CPV-ի կոդը՝ 15542100/1/4/3

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22001333032300
ՀՎՀՀ 04203287

տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԱՊՁԲ-7/16-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29. 01. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Խաք" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/16-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **75 983 250 (յոթանասունհինգ միլիոն ինը հարյուր ութանասուներեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	"Խաք" ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
աշխատակազմի գանձապետական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011[illegible]	Հ/Հ 220013330323000
ՀԿՀ 00857415	ՀԿՀ 04203287
ՀՀ [illegible] նախարարի տեղակալ-	
ՆՏԱ [illegible]	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/16-9 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2016թ.			
						1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 զորամաս	կգ	3750	940	3525000	1125	938	938	749
2	Թթվասեր տեղական Երևան -88865 զորամաս	կգ	4500	940	4230000	1350	1125	1125	900
3	Թթվասեր տեղական Երևան-32822 զորամաս	կգ	3000	940	2820000	900	750	750	600
4	Թթվասեր տեղական Երևան-14203 զորամաս	կգ	27000	940	25380000	8100	6750	6750	5400
5	Կաթնաշոր դասական Երևան - 14172 զորամաս	կգ	3000	1590	4770000	900	750	750	600
6	Կաթնաշոր դասական Երևան-88865 զորամաս	կգ	3500	1590	5565000	1050	875	875	700
7	Կաթնաշոր դասական Երևան -32822 զորամաս	կգ	2500	1590	3975000	750	625	625	500
8	Կաթնաշոր դասական Երևան-14203 զորամաս	կգ	16175	1590	25718250	4853	4044	4044	3234
Ընդամենը		75 983 250 (յոթանասունհինգ միլիոն ինը հարյուր ութսունսներեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ							

Ծանոթություն՝

թթվասերի և կաթնաշոռի պահանջարկի մատակարարումը 3 օրը մեկ անգամ՝ ըստ զորամասերի հայտի,մատակարարի միջոցներով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բ[illegible] 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գանձապետական վարչություն
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ [illegible]
ՀՀ պետական գանձապետական համակարգի տեղեկատվական
ՆՏԱ դեպարտամենտի տնօր.

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաչ" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22001330323000
ՀՎՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 2
№ ՇՀԾՁԲ-7/16-9 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան և մատակարարման վայրը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Թթվասեր տեղական Երևան - 14172 զորամաս	1057500	1057500	1057500	1939220	1939220	1939220	2820940	2820940	2820940	3525000	3525000	3525000
2	Թթվասեր տեղական Երևան -88865 զորամաս	1269000	1269000	1269000	2326500	2326500	2326500	3384000	3384000	3384000	4230000	4230000	4230000
3	Թթվասեր տեղական Երևան-32822 զորամաս	846000	846000	846000	1551000	1551000	1551000	2256000	2256000	2256000	2820000	2820000	2820000
4	Թթվասեր տեղական Երևան-14203 զորամաս	7614000	7614000	7614000	13959000	13959000	13959000	20304000	20304000	20304000	25380000	25380000	25380000
5	Կաթնաշոր դասական Երևան - 14172 զորամաս	1431000	1431000	1431000	2623500	2623500	2623500	3816000	3816000	3816000	4770000	4770000	4770000
6	Կաթնաշոր դասական Երևան-88865 զորամաս	1669500	1669500	1669500	3060750	3060750	3060750	4452000	4452000	4452000	5565000	5565000	5565000
7	Կաթնաշոր դասական Երևան -32822 զորամաս	1192500	1192500	1192500	2186250	2186250	2186250	3180000	3180000	3180000	3975000	3975000	3975000
8	Կաթնաշոր դասական Երևան-14203 զորամաս	7716270	7716270	7716270	14146230	14146230	14146230	20576190	20576190	20576190	25718250	25718250	25718250

Թթվասերի CPV-ի կոդը՝ 15512000/1/4/3, կաթնաշոռի CPV-ի կոդը՝ 15542100/1/4/3

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
պետական գանձարանային վարչություն
900[illegible]440
00[illegible]
Հանրապետական բյուջեի գանձարարի տեղակալ-
Ն.Երևանի գանձարանի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220013330323000
ՀՎՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/16-9

ք. Երևան 26-ը փետրվարի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Խաք" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված թթվասեր և կաթնաշոռ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /Հավելված N3/:

1.2 Հաջորդող տարիներին նախատեսված Ապրանքի մատակարարումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում: Ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից այդ մասով միակողմանի կլուծվի: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ապրանքատեսակների մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծվի:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսականու վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսականուն համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Ստանալ Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.4 Սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.5 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.6 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված տեսականու և որակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.3 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև

հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնման պայմանագրի առնվազն յոթանասունհինգ տոկոսն իրականացել անձամբ՝ առանց գործակալության պայմանագիր կնքելու:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.4.12 Յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից 24 ժամ առաջ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել Պատվիրատուին՝ ապրանքի հանձնման մասին pndepartament@mail.ru էլեկտրոնային հասցեով, նշելով՝ պայմանագրի ծածկագիրը, մատակարարվող ապրանքի անվանումը, քանակը և վայրը:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 195 180 000 (մեկ հարյուր իննսունհինգ միլիոն մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: 48 048 520 ՀՀ դրամի Ապրանքը կմատակարարվի 2015թ., իսկ 147 131 480 ՀՀ դրամի Ապրանքը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին կամ Ստացողին՝ Գնորդի ներկայացուցչի մասնակցությամբ, Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու(հաստատվելու) պահից /Հավելված N4/:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայամանգրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու(ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծարման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

ա.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

բ, Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

9.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 Հավելվածները՝ բաղկացած են 4 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.9 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	"Խաք" ՍՊԸ ՀՀ Արարատի մարզ, գ.Նարեկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 220013330323000 ՀՎՀՀ 04203287 տնօրեն
Ա.ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 1
N ԾՀԱՊՁԲ-7/16-9 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագրերը	Չ/հ
1	Թթվասեր, տեղական	Կովի թարմ կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T: 200 գր-ոց պոլիմերային փաթեթավորմամբ, պլաստմասե արկղերով, մեկ արկղի մեջ 30 տուփ, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին 100%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սենդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ
2	Կաթնաշոռ դասական	Կաթնաշոռ, յուղայնությունը 9%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 210 0T-ից ոչ ավել, 200 գր-ոց երբաթիթեղային փաթեթավորմամբ, պլաստմասե արկղերով, մեկ արկղի մեջ 40 տուփ, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 100%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սենդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ

Սահմանություն՝

1* **Ցուցաբերելիս թթվասերի և կաթնաշոռի փաթեթավորման տուփերի պիտակների վրա նշված լինեն՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
7. <<Ջինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
10. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:
11. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:

2* **Ցուցաբերելիս խմբաքանակի համար ոչ արտադրող մատակարար կազմակերպությունների կողմից մատակարարման վայր պետք է ներկայացվի ձեռքբերման փաստաթուղթ, համաձայն ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի N168-Ն և 2012թ-ի սեպտեմբերի 20-ի 1259-Ն որոշումների պահանջների:**

3* **Նախորդ օրը մատակարարված թթվասերի և կաթնաշոռի խմբաքանակի պլաստմասե արկղերը հետ է վերադարձվում մատակարարին՝ նոր խմբաքանակ ստանալու պահին:**

1. Տեխնիկական պայմանները մինչև առաջին խմբաքանակի մատակարարումը 4 օրինակից ներկայացնել պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի համաձայնեցմանը:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության տեղական
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ.Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220013330323000
ՀՎՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 2
N ԵՀԱՊՁԲ-7/16-9 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	Քանակը 2015թ-ի համար		Հաջորդող տարիներ	
								Քանակը	Մատակարարումը
1	Թթվասեր, տեղական Երևան - 14172 զորամաս	կգ	15 000	940	14 100 000	3 000	Ապրանքի մատակարարումը 2015թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.	12 000	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Թթվասեր, տեղական Երևան - 88865 զորամաս	կգ	15 000	940	14 100 000	3 700		11 300	
3	Թթվասեր, տեղական Երևան - 32822 զորամաս	կգ	6 000	940	5 640 000	2 000		4 000	
4	Թթվասեր, տեղական Երևան - 14203 զորամաս	կգ	60 000	940	56 400 000	19 648		40 352	
5	Կաթնաշոռ դասական Երևան - 14172 զորամաս	կգ	9 000	1 590	14 310 000	1 800		7 200	
6	Կաթնաշոռ դասական Երևան - 88865 զորամաս	կգ	10 500	1 590	16 695 000	2 200		8 300	
7	Կաթնաշոռ դասական Երևան - 32822 զորամաս	կգ	4 500	1 590	7 155 000	1 000		3 500	
8	Կաթնաշոռ դասական Երևան - 14203 զորամաս	կգ	42 000	1 590	66 780 000	8 460		33 540	
	Ընդամենը		195 180 000 (մեկ հարյուր իննսունհինգ միլիոն մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ						

Թթվասերի և կաթնաշոռի պահանջարկի մատակարարումը 3 օրը մեկ անգամ՝ ըստ զորամասերի հայտի, վաճառողի միջոցներով

ԳՆՈՐԴ
ք. Երևան, Բաղրամյանի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գլխավոր վարչություն
ՀՀ 90001144075
ՀՎՀՀ 00867415
ՀՀ աշխատանքային նախարարի տեղակալ-
ՊՏՀ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
"Խաք" ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ.Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220013330323000
ՀՎՀՀ 04203287
տնօրեն

Վ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 3
N ԵՀԱՊՁԲ-7/16-9 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

h/h	Գնման առարկան	CPV կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 25.12.2015թ				Հաջորդող տարիներ
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	
1	Թթվասեր, տեղական	15512000/1/4/3	6 661 801	13 323 602	19 985 403	26 647 120	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Կաթնաշոռ դասական	15542100/1/4/3	5 350 473	10 700 946	16 051 419	21 401 400	

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144039
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Խաք" ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ.Նարեկ
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220013330323000
ՀՎՀՀ 04203287

տնօրեն

Գ. ԽԱԼԱԹՅԱՆ

Հավելված N 4
N ԾՀԱՊՁԲ-7/16-9 պայմանագրի

Վաճառող	Գնորդ
_____	
_____	
_____	
_____	
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդն՝ ի դեմս _____ և Վաճառողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը _____ 20__թ-ից _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Մատակարարումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքն հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.